

**Ա. Ա. Գալստյան, Փոխարբերացման հոգելեզվաբանական վերլուծություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2008, 116 էջ:**

Սույն աշխատությունը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ, ամփոփում է հոգելեզվաբանության բնագավառում հեղինակի կատարած հետազոտության արդյունքները, և այն տարիներ առաջ հաջողությամբ պաշտպանվել է իբրև քեկնածուականատենախոսություն:

Նախ նկատենք, որ 1970–1980–ական թթ. նույն ինստիտուտում գործում էր հանրալեզվաբանության և հոգելեզվաբանության առանձին բաժին, որտեղ ակադ. Գ.Զահուկյանի, ինչպես նաև նախկին խորհրդային Միության այլ մասնագետների գիտական ղեկավարության պայմաններում լուրջ մասնագիտացում ստացան զգալի թվով խոստումնալից ասպիրանտներ և հայցորդներ: Սակայն այդ բաժնի գործունեությունը երկար չտևեց, քանի որ աշխատակիցների մի մասը ներառվեց այլ բաժինների մեջ, մնացած մասն անցավ այլ աշխատանքի հաստիքների կրճատման պատճառով:

Այսօր հայ լեզվաբանության մեջ շատ քիչ մասնագետներ կան, որ գիտական գործունեություն են ծավալում հատկապես հոգելեզվաբանության բնագավառում: Ա.Ա.Գալստյանը մեզանում այդ բնագավառի աչքի ընկնող ուսումնասիրողներից է, ևս իր մասնագիտացումը ստացել է հայտնի հոգելեզվաբան Ա.Ա.Լեոնտեի ղեկավարությամբ՝ լույս ընծայելով իր թեմային առնչվող գիտական հոդվածներ և վերջին հաշվով հեղինակելով հիշյալ ատենախոսությունը, որն այժմ հրատարակ է հանվում իբրև մենագրական աշխատանք՝ առանձին գրքով:

Այնուհետև նշենք, որ առհասարակ ճանաչողությունը մարդկային լեզվագործունեության հիմքն է, որը ոչ միշտ է իրականանում «մաքուր» ձևով, այն առավելապես կամ զրեթե ամբողջությամբ անհատականացված է, ունի ոճական բնույթ: Իսկ *ոճը* հաղորդակցման միջոցի կիրառության տարբերությունն է, այսինքն՝ *չեզու*ն վերածվում է *խոսքի* ոչ այլ կերպ, քան *ոճի* միջոցով՝ Վերջինս անպայման ունենում է գեղագիտական հիմքեր, որովհետև խոսքին հաղորդում է այնպիսի մանրամասներ («մանրուքներ»), որոնք այլ բան չեն, քան առհասարակ կամ *փոխարբերության* (անգլ. metaphor), կամ *փոխանունության* (անգլ. metonymy), կամ *համըմբռնման* (անգլ. synecdoche) միջոցով երևան եկող երանգներ: Վերջին երեքից յուրաքանչյուրը որքան լեզվական է իր արտահայտության պլանում, նույնքան էլ հոգեբանական է իր բովանդակու-

<sup>1</sup> Տես Վ. Գ. Համբարձումյան, Լեզու, ոճ, խոսք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, 3, էջ 182–191:

թյամբ՝ պայմանավորված հաղորդակցման ինչպես արդյունքի, այսպես կոչված՝ *վերջնապատճառի* (լատ. causa finalis), այնպես էլ այն առաջ բերող կամ գործադրվող հիմքի՝ *սկզբնապատճառի* (լատ. causa efficiens) մեջ գործառող հանգամանքներով: Ըստ այդմ համընդհանուր հաղորդակցման մեջ հոգեբանականը պետք է որոնել սկզբնապատճառի, լեզվականը՝ վերջնապատճառի ոլորտում, իսկ հոգելեզվաբանականն՝ այդ երկուսի փոխկապակցման, այլ կերպ ասած՝ փոխադարձության մեջ:

Այս տեսական դրույթից էլ ելնելով՝ մենք իրական ենք համարում Ա. Գալստյանի հետևյալ պարզ ձևակերպումը՝ իր շարունակության հետ միասին. «Փոխաբերական իմաստների առաջացման ճանապարհը փոխաբերական գործածությունն է: Փոխաբերական գործածության համար հետագա շարադրանքում առաջարկում ենք *փոխաբերակ* տերմինը» (տես գրախոս. աշխ., էջ 7): Այդ տերմինը, որքան մեզ հայտնի է, նոր է հայ լեզվաբանության մեջ, թերևս գրախոսվող աշխատության հեղինակի կողմից առաջարկված:

Եվ այսպես ներածության մեջ հեղինակն անդրադառնում է խնդրի կարևորությանը, ճշգրտվում են ուսումնասիրության առարկան և նշվում սկզբունքները:

Երկու գլուխներից առաջինը նվիրվում է բառերի փոխաբերական գործածության ոլորտին. առանձնացվում են հայերեն որոշակի թվով բառեր (հիմնականում՝ գոյականներ, ածականներ) և հարցաթերթիկների տեսքով տրամադրվում հարցման մասնակիցներին, այլև բառերի փոխաբերական գործածությունների օրինակներ են քաղվում արդի հայ գեղարվեստական գրականության մի քանի տասնյակից ավելի նմուշներից, և ըստ այդմ պարզվում է դրանց փոխաբերացման աստիճանը՝ տվյալները ներկայացնելով համապատասխան այդուսակներով, այնուհետև կատարվում է բառերի փոխաբերական գործածությունների բավականին հետաքրքիր և հիմնականում համոզիչ վերլուծություն:

Երկրորդ գլուխը, որը համեմատաբար ավելի ծավալուն է, նվիրված է բառապաշարի, ավելի կոնկրետ՝ հոգելեզվաբանական քննության համար ընտրված բառային միավորների տարբեր կարգի փոխաբերացումների օրինաչափությունների վերհանմանը, վերլուծությանը և գնահատությանը: Այստեղ ուշադրության առարկա են փոխաբերացման հիմքում ընկած հատկանիշները, այս կամ այն կարգի փոխաբերացումն ըստ *առարկա-հատկանիշ*, *առարկա-առարկա-հատկանիշ-հատկանիշ* և *հատկանիշ-առարկա* ոչ միապլան, երկու դեպքում՝ երկանդամ, մեկ դեպքում բազմանդամ առանձնացման և հակադարձման ձևով անցումները, մարդ-շրջակա միջավայր հարաբերության մեջ կատարվող իմաստային տեղաշարժերը, հաղորդակցական գործընթացում վերաբերմունքի դրսևորումը փոխաբերացման ժամանակ, իսկ վերջում առանձնացվում են փոխաբերացվող բառային միավորների իմաստային (թեմատիկ) խմբեր:

Ուսումնասիրությունն ավարտվում է հակիրճ ամփոփումով, և կից բերվում են հավելվածներ, որոնցից իմանում ենք, որ *աղվես*, *արջ*, *ծուլ*, *ոսկի* և *արծաթ* բառերից յուրաքանչյուրն, օրինակ, ունի առնվազն հինգուկես տասնյակ (*ծուլ* բառը՝ մեկով պակաս) փոխաբերացված գործածություն այս կամ այն կարգի

նախադասության մեջ՝ համատեքստում, իսկ հայ դասական և ժամանակակից գրականությունից քաղված տվյալներով, որոնք վերցված են Դ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի համապատասխան քարտարանից, *ծով բառն* ունի շուրջ երկու հարյուր նույնպիսի գործածություն:

Բերվում են նաև մասնագիտական և օգտագործված գրականության (գրքեր, թերթեր և ամսագրեր) ցանկեր:

Ամփոփման մեջ հստակ ներկայացվում են հետազոտության արդյունքները, որոնցից մեկը, որն, ըստ իս, ունի առանցքային կարևորություն, հետևյալն է. «Գեղարվեստական գրականությունից, բացատրական բառարաններից քաղված հարուստ նյութի ուսումնասիրությունը, ինչպես նաև հոգելեզվաբանական գիտափորձերի տվյալների վերլուծությունը բերում են այն համոզման, որ անհատական—բանաստեղծական փոխաբերական բառակապակցությունը ստեղծվում է իմաստային տեսակետից միմյանցից հեռու բառերի մերձեցումով: Փոխաբերական բառակապակցության մեջ փոխաբերացվող անդամը դժվար է կանխորոշել, իսկ անհատական—բանաստեղծական փոխաբերության մեջ կանխորոշման աստիճանը հավասարվում է գրոյի: Այս եզրակացությունը հիմնավորվում է հոգելեզվաբանական գիտափորձով»:

Վերջում անհրաժեշտ ենք համարում նշել, որ սույն աշխատությունը թեև գրվել է տարիներ առաջ և լույս է տեսել բոլորովին վերջերս, այդուհանդերձ այն իր բուն բովանդակությամբ, հետապնդվող խնդիրների բավականին ճիշտ լուծումներով, գիտական արդյունքներով մնում է արդիական, այսինքն՝ ունի գիտական կարևորություն հայոց լեզվի հոգելեզվաբանական ուսումնասիրության բնագավառում:

#### Վ. Գ. Դամբարձունյան